2) Կարմիր Խաչի Ընկերության Նպատակն է՝ — ա) պատերազմի ժամանակ խնամել հայրենիքի հիւանդ ու վիրաւոր զինուորականներին, ինչպէս և դաշնակից ու թշնամի զօրքերի բոլոր հիւանդներին ու վիրաւորներին, որոնք կը գտնուեն ընկերության գործունէության շրջանում: բ) Խաղաղ ժամանակ ընկերությունը իր հիմնարկութիւնների միջոցով ամէն տեսակ օգնութիւն է ցոյց տալիս հաշմանդամ զինուորականներին, օգնում է ընդհանուր աղէտներից վնասուածներին և օտար պետութիւնների իրար դէմ մղած պատերազմի ժամանակ օգնության է գալիս նրանց բանակներին:

3) Այդ նպատակներին հասնելու համար Ընկերությունը մշակում ու հաստատում է կանոններ ու հրահանգներ, բաց է անում հիւանդանոցներ, հանրակացարաններ գթության քոյրերի համար, բժշկա-առողջապահական դասընթացներ, մթերանոցներ և այլ հաստատութիւններ:

4) Ընկերության միջոցներն են կառավարության օժանդակությունը, տարեկան անդամավճարները, միանուագ նպաստները դրամով ու նիւթերով և ամէն տեսակ հանգանակութիւններ:

5) Ընկերությունը իրաւունք ունի ձեռք բերելու և վաճառելու ամէն կարգի շարժական ու անշարժ կայք:

Ծանօթ. Անշարժ կայք ձեռք բերելու և վաճառելու իրաւունք ունեն Ընկերության բոլոր ճիւղերի վարչութիւնները, միայն գլխաւոր վարչության համաձայնությամբ և Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերության անունով:

6) Ընկերության և նրա բոլոր հաստատութիւնները ազատ են ամէն տեսակի պետական, քաղաքային և տեղական մաքսերից, հարկերից, տուրքերից այլ և պոստային ու հեռագրական վճարումներից:

7) Ընկերության խորհրդանշանն է հաւասարաթեւ կարմիր խաչ՝ սպիտակի վրա, որը հաստատուած է Ժընևի կոնվենցիայում: Այդ խորհրդանշանը գործածելու իրաւունքը Հայաստանում պատկանում է միայն Կարմիր Խաչի Ընկերության, որի գլխաւոր վարչությունը, սակայն, կարող է արտօնել կողմնակի անհատներին ու հիմնարկութիւններին օգտուելու նրանից Կարմիր Խաչի նպատակներին ծառայող ձեռնարկութիւնների մէջ: Այդ խորհրդանշանն է կրում Ընկերության կնիքն ու դրոշմը, պահեստների, տրանսպորտների, հիւանդանոցների դրօշակները, ինչպէս և Ընկերության անդամների ու պաշտօնեաների ձախ թեւակապը:

8) Ընկերության գործերի ընդհանուր ղեկավարն է գլխաւոր վարչությունը, որ գտնուում է Հայաստանի մայրաքաղաքում:

Տեղական գործերը վարում են տեղական վարչութիւնները: Գլխաւոր և տեղական վարչութիւնների բոլոր անդամները իրենց պարտականութիւնները կատարում են ձրի:

9) Գլխաւոր վարչությունը բաղկացած է ոչ պակաս քան 11 անդամից և 5 փոխանդամից: Վարչությունը իր միջից ընտրում է նախագահ եւ երկու օգնական:

Գլխաւոր վարչությունն է, որ ա) կնքում է պայմանագրեր, բ) պահանջատէր է հանդիսանում և պաշտպանում ընկերության շահերը, գ) անում է անհրաժեշտ դիմումներ պետական, ինքնավարական և հասարակական հիմնարկութիւններին, դ) հաստատում է գթության քոյրերի, սանիտարների, ապաստարանների, հիւանդանոցների, որբանոցների և այլ նման հաստատութիւնների կանոնադրությունը, ե) հիմնում է ճիւղեր և հաստատում է վարչութիւններին և զ) գործադրում է ընդհանուր ժողովների որոշումները: